ՄԱՅՐ ԱԹՈՌ

Յունիսի սկզբներին ճեմարանի ուսուցչութեան պաշտօններից հրաժարուեցին Կարապետ, Գարեգին և Երուանդ վարդապետները և պ. պ. Ս. Տիգրանեան, Յովհաննէս Յովհաննիսեան և Գէորգ Ղազարեան։ Արժանապատիւ Գարեգին վարդապետը հրաժարուեց նաև տեսչական պաշտօնից։ Նրա տեղը դեռ ոչ ոք չի նշանակուած, բայց չը նայելով այս բանին, հայր Գարեգինը ստիպուած էր նոր կարգադրութեան չը սպասած թոյլտուութիւն ստանալ և մեկնել այստեղից Պետերբուրգ ապաքինելու իւր հիւանդութիւնը, որը գնալով դժբաղդաբար աւելի սաստկանում է։ Մեկնելուց երկու օր առաջ Գարեգին վարդապետը զբօսանքի ժամանակ Ներսիսեան լճի ափին յանկարծ ուշաթափուել էր և այդ այնքան յաճախ էր կրկնուում, որ լճի ափից ճեմարան բազկաթոռով փոխադրելու համար հարկաւորուեց մէկ և կէս ժամ։ Այդ դէպքը մեծ յուզում առաջ բերաւ մերձաւորների շրջանում, բայց գիշերուայ 10 ժամին Գարեգին հայրասուրբը բաւական այժի եկաւ և հետևեալ օրը արձակուրդ ստացաւ Վեհափառ Հայրապետից։

Մայր Աթոռից հանքային ջրերն ուղևորուեց Յուսիկ վարդապետը, որը գնալու է նաև Նոր Նախիջևան և իւր ծննդավայրը։

Էջմիածնից եռամսեայ արձակուրդով բժշկուելու համար մեկնեց Մեսրոպ վարդապետ Տէր Մովսիսեանը։

Համաձայն իւր խնդրանաց և Հին-Ղրիմի ժողովրդականաց ընտրութեան ս. Խաչ վանքի վանահայր նշանակուեց Եղիշէ Ծ. վարդապետ Մուրադեանը և յունիսի 14-ին ուղևորուեց իւր պաշտօնատեղին։

Մայր Աթոռից մեկնեց Աղէքսանդրապոլ և այնտեղից Հառիճ տ. Երուանդ վարդապետը։

Նորին Սրբութեան դիւանապետի պաշտօնակատար նշանակուեց արժանապատիւ Տաճատ վարդապետը,

---

Մայիսի 10-ի կոնդակից յետոյ հրաժարական տուին Թիֆլիզի թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեանը, Շուշուայ առաջնորդ Աշոտ եպիսկոպոս Շախեանը և Ասարխանի թեմակալ Աբիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանը։ և Շամախու առաջնորդ Անանիա եպիսկոպոսը։

Փոխանորդներից հրաժարական են ուղարկել և խնդրել ընտրութիւններ նշանակել Գանձակի, Գօրուոյ և Ախալցխայի փոխանորդներ Կորիւն, Խորէն և Սիօն վարդապետները։

Նորին Սրբութեան № 693 կոնդակով հրաւիրուում է համաժողով օգոստոսի 15-ին, որը զբաղուելու է դպրոցական, տնտեսական և ընտրական խնդիրներով։